

ՊԱՏՐԻԱՐԷԱՐԱՆ ՆՔԱՌՆ Armenian Patriarchate

Կրթական Առաքելութիւնը Հայ Երուսաղէմի

Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան եւ Պատրիարքութեան րազմանիւղ առաքելութեան մէջ, իմացական եւ կրթական աշխատանքը կարեւոր իր տեղը ունի:

Երախտագիտութեամբ կը յիշենք այն իրողութիւնը, թէ Երուսաղէմ քաղաքի մէջ առաջին տպարանի եւ տպագրութեան նախնական գործիքներու հաստատումը կատարուած է 1833 թուականին եւ Հայոց Վանքէն ներս: Իսկ մանուկներու կրթական եւ դաստիարակչական աշխատանքը՝ 1842 թուականներէն սկսեալ, եւ տարբեր վայրերու մէջ (Ռամլէ, Երուսաղէմ) եւ տարբեր անուններով:

Թարգմանչաց վարժարանի ներկայ շէնքին տեղ, 1862 թուականին գոյութիւն ունէր Մանկապարտէզը 25 քառակուսի մէթր տարածութեան վրայ, եւ Գալանեան անունով Աղջկանց Նախակրթարանը 48 քառակուսի մէթր տարածութեամբ: Իսկ Մանչերու Նախակրթարանը, Մեսրոպեան անունով, կը գտնուէր Ժառանգաւորաց Վարժարանի նեմարանի շէնքին ներքնասրահին մէջ, ներկայ խաղավայրին վրայ բացուող մուտքով: Ժառանգաւորաց Վարժարանի ձեմարանը կառուցուած է 1857 թուականին, նարտարապետ Պալեան եղբայրներու ծրագրումով եւ Յովհաննէս Պատրիարքի օրով (1850-1860):

Մէկուկէս դարու տնտղութեան ընթացքին, կրթական նախաձեռնութիւնները իրենց յառաջընթացը արձանագրած են քալլ պահելով դաստիարակչական նոր դրութիւններու հետ:

Դաստիարակութեան նոր շրջան մը կը սկսի Երուսաղէմի եղիշէ Պատրիարք Դուրեանի (1921-1930) գահակալութենէն յետոյ, երբ Սրբոց Յակոբեանց Վանքի հարաւային թեւի երկայնքին համալիր մը կը կազմեն Ս. Հրեշտակապետաց Եկեղեցին, Ժառանգաւորաց ձեմարանը, Գալուստ Կիւլպէնկեան Մատենադարանը եւ 1929ին նորակառոյց Սրբոց Թարգմանչաց Նախակրթարանը եւ Մանկապարտէզը:

Այսպէսով, Վանքի մթնոլորտին մէջ, Եկեղեցին, Դպրոցը եւ Ընտանիքը, մեր զաւակներուն կազմաւորման եւ դաստիարակութեան անհրաժեշտ եւ գործակից ազդակները կը դառնան:

ՊԱՏՐԻԱՐԽԱՐԿԱՆ ՆՔԱՅՈՑ Armenian Patriarchate

Եւ Պատրիարքութեանս խնամքին ենթակայ կրթական երկու օճախները՝ ժառանգաւորաց Վարժարանը եւ Սրբոց Թարգմանչաց նախակրթարանը, արդարեւ մշակոյթի եւ հոգեւոր ժառանգութեանց բուրային մէջ «կապարն յոսկի, նիւթն յոգի» վերածող երկու «Տանար հրաշագործ լուսոյ Վառարան» հաստատութիւններ կը դառնան: Առաջինը՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ հոգեւոր սպասաւորութեան մշակներ պատրաստող կրթարան: Երկրորդը՝ Հայ Մանուկներու Պարտէզի ծաղիկներէն մինչեւ Հայ պատանիներու բարձրագոյն կրթութիւնը, մեր գաւակներուն ազգային, մշակութային, կրօնական ժառանգութեանց, եւ ընդհանրական մշակոյթներու ազնուագոյն հաշակներուն հաղորդակից դարձնող ուսումնարան:


Նոյն ձգտումներով կը կազմուին Սրբոց Թարգմանչաց Սանուհեաց Միութիւնը 1933ին եւ երկսեռ Մըջանաւարտից Միութիւնը 1943ին: Իսկ Վարժարանի ուսումնական ծրագիրը կը բարձրանայ նախակրթարանի մակարդակէն դէպի Երկրորդական Բարձրագոյն ուսումնառութիւն, 1953էն սկսելով:

Բոլոր վերիվայրումներով հանդերձ, Սրբոց Թարգմանչաց Վարժարանը հաւատարիմ մնաց իր կոչումին ու կրթական առաքելութեան: Եօթնասուն տարիներու իր ծառայութեան շէնքին մէջ օրհնութեամբ կը յիշուին բոլոր երախտաւոր բարերարները, նուիրեալ դաստիարակները, եւ հարազատ ու երախտագէտ գաւակները Հայ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Պատրիարքութեան:

Պր. Եղիա Տիգրանեանի առաւել քան քառասունամեայ դաստիարակի քծախնդրութիւնը եւ պատասխանատւի հոգատարութիւնը կ'երաշխաւորեն ընտանի հարազատութիւնը սոյն պատկերագրէին, ուր նոյն ընտանիքի սերունդներուն կենդանի վկայութիւնը կը գտնենք, խնամքով եւ շարայար դասաւորուած:

Քրիստոսի Ծննդեան 2000 ամեակը տօնախմբութեան առիթ է մանաւանդ Հայ Երուսաղէմի եւ Թարգմանչաց Վարժարանի տարասփիռ գաւակներուն համար, որպէսզի ուխտի գան դէպի իրենց ծննդավայրը եւ իրենց մտքի եւ հոգիի սրբութիւնները:

Սիրոյ Ողջունի


Թորգոմ Արք. Մանուկեան
Հայ Պատրիարք Երուսաղէմի